«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № __17 § 6____ ___29____ ____01____ 2025թ.

ՀՀ. ք. Իջևան 4001 Ուսանողական 3
Քաղվածք

2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հաստատել մասնաճյուղի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը:

Բոլոր ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների: Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտարկել որպես աշխատանքային պարտականությունների չկատարում և «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ներքին կարգապահական կանոններով» սահմանված կարգով կիրառել կարգապահական տույժ:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի վրա:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝ ԱԿԻՍ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Ն. Ժ ԱԲԱՋՅԱՆ

I. 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի **ուսումնական պարապմունքներն սկսել՝**

ա) առկա ուսուցման համար՝ փետրվարի 4-ից և ավարտել մայիսի 31-ին,

բ) հեռակա ուսուցման համար՝ մարտի 11-ից և ավարտել ապրիլի 12-ին,

գ) հեռակա ուսուցման մագիստրատուրայի 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրի ավարտական կուրսի համար՝ մարտի 11-ից և ավարտել ապրիլի 12-ին:

2. 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի **ստուգարքների ընդունումը կազմակերպել՝**

ա) առկա ուսուցման բակալավրիատի համար՝ մայիսի 27-ից մինչև 31-ը,

բ) հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի համար՝ մայիսի 27-ից մինչև 31-ը,

գ) հեռակա ուսուցման մագիստրատուրայի 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրի ավարտական կուրսի համար՝ ապրիլի 10-ից մինչև 12-ը:

3. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի **քննաշրջաններն անցկացնել** հունիսի 3-ից՝ 21-ը,

ա) հեռակա ուսուցման մագիստրատուրայի 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրի ավարտական կուրս՝ ապրիլի 15-ից մինչև 19-ը:

4. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի **պարտքերի մարում սահմանել՝**

ա) առաջին լուծարքային շրջան՝ հունիսի 27-ից հուլիսի 3-ը,

բ) երկրորդ լուծարքային շրջան՝ օգոստոսի 22-ից՝ 30-ը,

գ) հեռակա ուսուցման մագիստրատուրայի 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրի ավարտական կուրս՝

- առաջին լուծարքային շրջան՝ ապրիլի 22-ից մինչև 26-ը,
- երկրորդ լուծարքային շրջան՝ ապրիլի 29-ից մինչև մայիսի 3-ը:

5. Բակալավրիատի և մագիստրատուրայի 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի **ուսումնական պարապմունքներն սկսել՝**

ա) առկա ուսուցման համար՝ սեպտեմբերի 2-ից և ավարտել դեկտեմբերի 27-ին,

բ) հեռակա ուսուցման առաջին կուրսի համար՝ նոյեմբերի 11-ից և ավարտել դեկտեմբերի 13-ին,

գ) հեռակա ուսուցման երկրորդ և ավելի բարձր կուրսերի համար՝ նոյեմբերի 4-ից և ավարտել դեկտեմբերի 6-ին:

6. Բակալավրիատի առկա ուսուցման շրջանավարտների 2025թ. ամփոփիչ ատեստավորումը կազմակերպել մայիսի 2-ից մինչև 31-ը ժամանակահատվածում:

7. Բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման շրջանավարտների 2025թ. ամփոփիչ ատեստավորումը կազմակերպել հունիսի 3-ից մինչև 21-ը ժամանակահատվածում:

8. Ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ստուգարքներին ու քննություններին (այդ թվում՝ ընթացիկ քննություններին ու պրակտիկաների ստուգարքներին): Ամսական վճարման պարագայում առաջին ընթացիկ քննություններին թույլատրել մասնակցելու երկու ամսվա ուսման վարձը վճարելուց հետո:

Մինչև ավարտական կուրսերի ուսանողների նախապաշտպանությունների մեկնարկը՝ առնվազն երեք օր առաջ, տնօրենին ներկայացնել զեկուցագիր ուսման վարձավճարի պարտք ունեցող և մասնաճյուղից հեռացման ենթակա ուսանողների վերաբերյալ:

9. Բակալավրիատի ավարտական աշխատանքների պաշտպանությունից առնվազն երկու շաբաթ առաջ ՈՒՄՎ ներկայացնել 2024-2025 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման ավարտական կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների

արդյունքները և ավարտական աշխատանքների պաշտպանությանը թույլատրված ուսանողների վերաբերյալ զեկուցագրերը:

10. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների օրը ՈՒՄՎ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման շրջանավարտների անձնագրային տվյալները:
11. Ամփոփիչ ատեստավորման վերջին օրվան հաջորդող օրը կազմակերպել հանձնաժողովների նիստերը, որից հետո մեկօրյա ժամկետում ՈՒՄՎ ներկայացնել առկա և հեռակա ուսուցման շրջանավարտների ավարտման վերաբերյալ զեկուցագրերը:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները ՈՒՄՎ ներկայացնել վերջին քննությունից հետո հնգօրյա ժամկետում (ըստ 4-րդ ձևի):

12. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությանը նախորդող մեկ շաբաթվա ընթացքում ՈՒՄՎ ներկայացնել գրախոսության համար նախատեսված ժամաքանակի զեկուցագրերը:
13. Մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն մեկ շաբաթ առաջ SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում (այսուհետ՝ SV համակարգ) մուտքագրել մագիստրոսական թեզերի արտաքին գրախոսների տվյալները:
14. Միջմասնագիտական մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն երեք շաբաթ առաջ ՈՒՄՎ ներկայացնել միջամբիոնային հանձնաժողովների եզրակացությունները՝ միջմասնագիտական մագիստրոսական թեզերի վերաբերյալ:
15. Պրակտիկան սկսվելուց 10 օր առաջ մասնաճյուղի ՈՒՄՎ բաժին ներկայացնել պրակտիկա անցնող ուսանողների վերաբերյալ զեկուցագրերն ու ըստ նախապես համաձայնեցված պրակտիկայի անցկացման վայրերի տեղաբաշխած ուսանողների ցուցակները: Պրակտիկաների ավարտից հետո, 15-օրյա ժամկետում, ներկայացնել հաշվետվությունները:
16. Ժամավճարային հիմունքներով կատարված աշխատանքների հաշվարկի տեղեկագրերը (աշխատանքների հանձնման ակտ) ՈՒՄՎ ներկայացնել մինչև տվյալ ամսվա ավարտը:
17. Բացակայող աշխատողներին փոխարինելու մասին զեկուցագրերը մասնաճյուղի տնօրենին ներկայացնել փոխարինման անհրաժեշտություն առաջանալու պահից առավելագույնը եռօրյա ժամկետում:
18. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողական իրավունքները վերականգնող և տեղափոխվող ուսանողների հետ վերակնքված պայմանագրերը ՈՒՄՎ ներկայացնել հրամանագրումից հետո երկօրյա ժամկետում:
19. Յուրաքանչյուր ամսվա ավարտին ուսումնական ստորաբաժանման գրասենյակում ամփոփել ուսանողների բացակայությունները և թույլատրելի շեմը գերազանցելու դեպքում ներկայացնել զեկուցագիր տնօրենին:

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՈՒՆՎԱՐ

- Մինչև հունվարի 30-ը ՈՒՄՎ ներկայացնել բակալավրիատի առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները և հաշվետվության 34 ձևը;
- Մինչև հունվարի 31-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների **մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի** վերահանձնման դիմումները՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ և վճարման անդորրագրերով:
- Մինչև հունվարի 31-ը ՈՒՄՎ ներկայացնել 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների վերաբերյալ զեկուցագրերը:

- Մինչև հունվարի 31-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի առկա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը և ՈՒՄՎ-ի հետ համատեղ ամրագրել SV համակարգում:
- Մինչև հունվարի 31-ը ՈՒՄՎ ներկայացնել տվյալներ առկա ուսուցման ուսանողների շրջանում 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

ՓԵՏՐՎԱՐ

- Փետրվարի 3-11-ը ապահովել դասախոսի կողմից Ռեգիստրար համակարգում ընթացիկ կիսամյակում դասավանդվող առկա ուսուցման դասընթաց(ներ)ի բաղադրիչների՝ ընթացիկ քննություն, ինքնուրույն աշխատանք, ընթացիկ ստուգում, մասնակցություն, եզրափակիչ քննություն, առավելագույն միավորների մուտքագրումը:
- Փետրվարի 7-13-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցների և քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը և ՈՒՄՎ-ի հետ համատեղ ամրագրել SV համակարգում:
- Մինչև փետրվարի 10-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների **դասընթացի կրկնման** դիմումները՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ և վճարման անդորրագրերով, այնուհետև ներկայացնել դասընթացների կազմակերպման վերաբերյալ առաջարկներով համապատասխան զեկուցագրերը:
- Մինչև փետրվարի 11-ը ՈՒՄՎ ներկայացնել անվանական կրթաթոշակի հավակնորդների փաստաթղթերի փաթեթները՝ համաձայն համապատասխան կարգի դրույթների:
- Մինչև փետրվարի 12-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման շրջանավարտների ավարտման մասին զեկուցագրերը:
- Մինչև փետրվարի 12-ը ՈՒՄՎ ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը (ձև 4):
- Մինչև փետրվարի 14-ը ՈՒՄՎ-ի հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասատախտակները:

Վերջնաժամկետից հետո ԵՊՀ ԻՄ բոլոր լսարանները հասանելի են բոլոր ուսումնական ստորաբաժանումների համար:

- Մինչև փետրվարի 18-ը ՈՒՄՎ ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը (ձև 10):
- Մինչև փետրվարի 18-ը e-learning.ysu.am ուսուցման կառավարման համակարգի (ՈՒԿՀ) համապատասխան դասընթացի էջում տեղադրել 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդվող դասընթացների պլանները:
- Մինչև փետրվարի 25-ը ՈՒՄՎ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:
- Մինչև փետրվարի 28-ը ՈՒՄՎ ներկայացնել բակալավրիատի առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքի արդյունքները՝ սահմանված ձևով (հաշվետվություն ձև 34):

ՄԱՐՏ

- Մինչև մարտի 4-ը ՈՒՄՎ ներկայացնել տվյալներ հեռակա ուսուցման ուսանողների շրջանում 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողական առցանց հարցում կազմակերպելու համար:

- Մինչև մարտի 4-ը ՈւՄՎ-ի հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի առկա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցները:
- Մինչև մարտի 5-ը ՈւՄՎ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալները և հաշվետվության 34 ձևը:
- Մինչև մարտի 7-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը և ՈւՄՎ-ի հետ համատեղ հանձնաժողովների կազմերն ամրագրել SV համակարգում:
- Մինչև մարտի 11-18-ը ապահովել դասախոսի կողմից Ռեգիստրար համակարգում ընթացիկ կիսամյակում դասավանդվող հեռակա ուսուցման դասընթաց(ներ)ի բաղադրիչների՝ ընթացիկ քննություն, ինքնուրույն աշխատանք, ընթացիկ ստուգում, մասնակցություն, եզրափակիչ քննություն, առավելագույն միավորների մուտքագրումը:
- Մարտի 11-ը ԵՊՀ ԻՄ տնօրենի հաստատմանը ներկայացնել 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար պրոֆեսորի օգնականի հավակնորդների ցուցակը:
- Մարտի 10-31-ը ՈւՄՎ-ի հետ կազմակերպել մագիստրատուրայի հեռակա ուսուցման 90 ECTS կրեդիտ կրթական ծրագրի ուսանողների կողմից Ռեգիստրար համակարգում 2025-2026 ուսումնական տարվա կամընտրական դասընթացների ընտրության գործընթացը:
- Մինչև մարտի 14-ը ՈւՄՎ-ի հետ համատեղ սահմանված ձևով SV համակարգում մուտքագրել բակալավրիատի առկա ուսուցման 2025-2029թթ. և հեռակա ուսուցման 2025-2030թթ., մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2025-2027թթ. ուսումնական պլանները:
- Մինչև մարտի 21-ը ՈւՄՎ ներկայացնել բակալավրիատի 2025թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածուների տվյալները:
- Մինչև մարտի 28-ը ՈւՄՎ ներկայացնել առաջին և երկրորդ ընթացիկ քննությունների ընթացքում հետազոտական աշխատանքների պաշտպանության ժամանակացույցները:

<u>ԱՊՐԻԼ</u>

- Մինչև ապրիլի 1-ը ՈւՄՎ-ի հետ համատեղ SV համակարգում ամրագրել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ավարտական կուրսի քննաշրջանի ժամանակացույցը:
- Մինչև ապրիլի 3-ը ՈՒՄՎ-ի հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցները:
- Մինչև ապրիլի 4-ը ՈւՄՎ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքի արդյունքներն՝ ըստ սահմանված ձևի:
- Ապրիլի 4-ից մինչև 10-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների **մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի** վերահանձնման դիմումները՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ և վճարման անդորրագրերով:
- Մինչև ս/թ ապրիլի 5-ը մասնաճյուղի տնօրենին ներկայացնել զեկուցագիր՝ առկա և հեռակա ուսուցման 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակի վերաբերյալ՝ նշելով տետրերի ծավալը (էջերի թիվը): ***Ներկայացված զեկուցագրերը հիմք են հանդիսանում համապատասխան գրությամբ ԵՊՀ-ին դիմելու և ԵՊՀ-ի պահեստից ստանալու համար***:
- Մինչև ապրիլի 5-ը մասնաճյուղի տնօրենին ներկայացնել զեկուցագիր՝ 2025-2026 ուսումնական տարվա համար անհրաժեշտ դասամատյանների քանակի վերաբերյալ՝ նշելով տեսակը (փոքր,

միջին, մեծ): ***Ներկայացված զեկուցագրերը հիմք են հանդիսանում համապատասխան գրությամբ ԵՊՀ-ին դիմելու և ԵՊՀ-ի պահեստից ստանալու համար:***

- Մինչև ապրիլի 8-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման 2025թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի վերաբերյալ զեկուցագրերը:
- Մինչև ապրիլի 8-ը ՈՒՄՎ ներկայացնել բակալավրիատի առկա ուսուցման 2025թ. ամփոփիչ ատեստավորման գործընթացի ժամանակացույցը:
- Մինչև ապրիլի 11-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը և ՈՒՄՎ-ի հետ համատեղ հանձնաժողովների կազմերն ամրագրել SV համակարգում:
- Մինչև ապրիլի 17-ը ՈՒՄՎ ներկայացնել տվյալներ մագիստրատուրայի հեռակա ուսուցման ավարտական կուրսերի ուսանողների շրջանում 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսանողական առցանց հարցում կազմակերպելու համար:
- Ապրիլի 17-ից մինչև 23-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցների և քննական հանձնաժողովների կազմերի զեկուցագրերը և ՈՒՄՎ-ի հետ համատեղ ամրագրել SV համակարգում:
- Մինչև ապրիլի 23-ը ՈՒՄՎ ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ավարտական կուրսի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալները:

<u>ՄԱՅԻՍ</u>

- Մինչև մայիսի 7-ը ՈՒՄՎ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:
- Մինչև մայիսի 8-ը ՈՒՄՎ ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքի արդյունքներն՝ ըստ սահմանված ձևի:
- Մինչև մայիսի 13-ը SV համակարգում ՈՒՄՎ-ի հետ համատեղ ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցները:
- Մինչև մայիսի 13-ը ՈՒՄՎ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2025թ. ամփոփիչ ատեստավորման գործընթացի ժամանակացույցը:
- Մինչև մայիսի 15-ը ՈՒՄՎ-ի հետ համատեղ, սահմանված ձևով SV համակարգում մուտքագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային ուսումնական պլանները:
- Մինչև մայիսի 16-ը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պաշտոնական կայքեջում (www.ijevan.ysu.am) վերախմբագրել 2025-2026 ուսումնական տարում մագիստրատուրայի հեռակա ուսուցման ընդունելություն հայտարարած կրթական ծրագրերի **ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ** բաժինը:
- Մինչև մայիսի 23-ը ՈՒՄՎ ներկայացնել տվյալներ բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների շրջանում 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսանողական առցանց հարցում կազմակերպելու համար:
- Մինչև մայիսի 30-ը SV համակարգ ներբեռնել առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրերի մասնագրերը և դասընթացների նկարագրիչները:

<u>ՀՈՒՆԻՍ</u>

- Մինչև հունիսի 3-ը ՈՒՄՎ-ի հետ համատեղ SV համակարգում մուտքագրել կամ խմբագրել պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները:

- Մինչև հունիսի 3-ը ՈւՄՎ ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ոչ ավարտական կուրսերի մագիստրոսական թեզերի ատեստավորման արդյունքները՝ հիմք ընդունելով e-learning.ysu.am համակարգում ներկայացված հաշվետվությունները:
- Մինչև հունիսի 3-ը ՈւՄՎ-ի հետ համատեղ SV համակարգում մուտքագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ամբիոնային և դասախոսների անհատական բեռնվածությունները:
- Մինչև հունիսի 6-ը ՈւՄՎ ներկայացնել հաշվետվություն բակալավրիատի առկա ուսուցման 2025թ. ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ (ձև 10):
- Մինչև հունիսի 12-ը ՈւՄՎ ներկայացնել ուսումնական ստորաբաժանումների գիտական խորհուրդներում քննարկված բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունների վերաբերյալ քաղվածքները («Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» 114-րդ կետի պահանջներին համապատասխան):
- Հունիսի 20-ից մինչև 30-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների **մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի** վերահանձնման դիմումները՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ և վճարման անդորրագրերով:
- Մինչև հունիսի 25-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը և ՈւՄՎ-ի հետ համատեղ ամրագրել SV համակարգում:
- Մինչև հունիսի 26-ը ՈւՄՎ ներկայացնել հաշվետվություն՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման վերաբերյալ (կարգի դրույթներին համապատասխան):
- Մինչև հունիսի 27-ը ՈւՄՎ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալներ՝ ըստ սահմանված ձևի և հաշվետվության 34 ձևը:
- Մինչև հունիսի 30-ը SV համակարգ ներբեռնել հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերը և դասընթացների նկարագրիչները:

<u>ՀՈՒԼԻՍ</u>

- Մինչև հուլիսի 4-ը ՈւՄՎ ներկայացնել հաշվետվություն բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2025թ. ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ (ձև 10):
- Հուլիսի 5-ից մինչև 12-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցների և քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը և ՈւՄՎ-ի հետ համատեղ ամրագրել SV համակարգում:
- Մինչև հուլիսի 12-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների՝ կուրսից կուրս փոխադրման վերաբերյալ զեկուցագրերը:
- Մինչև հուլիսի 15-ը ՈւՄՎ-ի հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի առկա ուսուցման 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասատախտակները (առաջին կուրսերինը՝ նախնական տարբերակով): Վերջնաժամկետից հետո ԵՊՀ ԻՄ բոլոր լսարանները հասանելի են բոլոր ուսումնական ստորաբաժանումների համար:
- Մինչև հուլիսի 18-ը SV համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա շրջանավարտների անձնագրային տվյալները և ստուգել ընդունման և ավարտման հրամանները:

<u>ՕԳՈՍՏՈՍ</u>

- Օգոստոսի 22-ից սեպտեմբերի 9-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների **դասընթացի կրկնման** դիմումները՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ և վճարման անդորրագրերով, այնուհետև ներկայացնել դասընթացների կազմակերպման վերաբերյալ առաջարկներով համապատասխան զեկուցագրերը:

<u>ՍԵՊՏԵՄԲԵՐ</u>

- Մինչև սեպտեմբերի 3-ը ՈՒՄՎ-ի հետ համատեղ բակալավրի կրթական ծրագրերի առկա ուսուցման առաջին կուրսերի ուսանողների համար Ռեգիստրար համակարգում կազմակերպել «Օտար լեզու» և «Ֆիզիկական դաստիարակություն» դասընթացների ընտրությունը:
- Մինչև սեպտեմբերի 4-ը ՈՒՄՎ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքների վերաբերյալ արդյունքները՝ սահմանված ձևով:
- Մինչև սեպտեմբերի 4-ը ՈՒՄՎ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:
- Մինչև սեպտեմբերի 9-ը ՈՒՄՎ-ի հետ համատեղ SV համակարգում ձևավորել և հաստատել լեզվական խմբերը՝ ըստ թեստավորման արդյունքների, և ֆիզիկական դաստիարակության սեկցիոն խմբերը՝ ըստ կատարված ընտրության:
- Մինչև սեպտեմբերի 9-ը ՈՒՄՎ ներկայացնել անվանական կրթաթոշակի հավակնորդների փաստաթղթերի փաթեթները՝ համաձայն համապատասխան կարգի դրույթների:
- Մինչև սեպտեմբերի 9-ը ՈՒՄՎ-ի հետ համատեղ աշխատանքային պլաններում ամրագրել ճշգրտված լեզվական խմբերը:
- Մինչև սեպտեմբերի 10-ը ուսումնական ստորաբաժանումների մանդատային հանձնաժողովներում հաստատել փոխատեղման (ռոտացիա) հավակնորդների ցուցակները և արդյունքները ներկայացնել մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնին:
- Մինչև սեպտեմբերի 16-ը ՈՒՄՎ-ի հետ համատեղ SV համակարգում մուտքագրել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասատախտակները (բացառությամբ առաջին կուրսերի): Վերջնաժամկետից հետո ԵՊՀ ԻՄ բոլոր լսարանները հասանելի են բոլոր ուսումնական ստորաբաժանումների համար:
- Մինչև սեպտեմբերի 16-ը ՈՒՄՎ ներկայացնել ՄՄՈՒՀ-ի շրջանավարտների առարկայական տարբերությունների ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝ ԱԿԻԱ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Ն. Ժ ԱԲԱՋՅԱՆ